Թվագրված: Հուլիսի 21, 2020 թվական

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՏԱՆՏԻՐՈՋԸ՝ COVID-19ի ՊԱՏՃԱՌՈՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՉՎՃԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՏԱՐՈՒՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գլենդելի քաղաքապետարանն ընդունել է վարձավճարները չվճարելու դեպքում վտարման ժամանակավոր հետաձգման (մորատորիում) մասին որոշում, բնակելի եւ որոշ առեւտրային վարձակալների դեպքում, ում եկամուտի վրա COVID-19 համաճարակը բացասաբար է անդրադարձել: Հետաձգման ողջ շրջանում, տանտերը չի կարող վարձակալին վտարել վարձը չվճարելու համար, եթե վարձակալը անկարող է վճարել վարձը COVID-19- ով պայմանավորված եկամուտի կորուստի պատճառով:

Որոշումն ուժի մեջ է մտնում այն պահից սկած, երբ վարձակալը տանտիրոջը «ծանուցում» է ներկայացնում, ինչպես նկարագրված է ստորեւ ներկայացված ձեւաթերթիկում, եւ տանտերը, այդ ժամանակ, չի կարող վարձակալության կամ բնակարանից դուրս գալու մասին ծանուցել վարձակալին, կամ, վարձակալի դեմ անօրինական բռնազավթման համար հայց ներկայացնել: Տանտերը նաեւ չի կարող վարձավճարի ուշացման համար տուգանք կամ տոկոս գանձել, որը հետաձգվել է նշված պատճառով:

Հետաձգման հրամանը նախապես հրապարակվել էր 2020 թվականի Մարտի 24-ին, եւ այդ պահից ի վեր վերափոխվել է: Բնակելի տների վարձակալների համար հետաձգումն ուժի մեջ է մինչեւ 2020 թվականի Օգոստոսի 31-ը

Հետաձգման շրջանակներում վտարումից պաշտպանություն պահանջող վարձակալը պետք է տանտիրոջը տեղեկացնի, որ.

1) վարձակալն ի վիճակի չէ վճարել վարձը, եւ
(2)վարձակալը եկամուտի կորուստ է ունեցել COVID-19ի՝ իր ֆինանսական վիճակի վրա ունեցած ազդեցության արդյունքում:

Վարձակալը պետք է իր դիմումին աջակցող փաստաթղթեր տրամադրի:

Վարձակալը պարտավոր է տանտիրոջը տեղեկացնել վերը նշված փաստերի մասին՝ կցելով համապատասխան փաստաթղթեր: Քաղաքապետարանի Հետաձգման հրամանը պահանջում է, որ վարձակալն այդ մասին ծանուցի տանտիրոջը վարձավճարի վճարման ժամկետի օրը կամ դրանից առաջ: Վարձակալը պետք է տեղեկացնի տանտիրոջը կամ տանտիրոջ ներկայացուցչին (օրինակ՝

կառավարիչին) «գրավոր», ինչը ներառում է նամակ էլ.փոստ-ին կամ հաղորդագրություն: Վարձակալը պետք է պահի տանտիրոջն ուղղված բոլոր ծանուցումների պատճենները:

ՎԱՐՁԱԿԱԼԻ՝ ՎԱՐՁԻ ՄԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Վարձակալները կունենան մինչեւ տասներկու ամիս՝ 2020թվականի Օգոստոսի 31-ի Հետաձգման ժամկետի ավարտից հետո, մարելու ժամանակին չվճարված ցանկացած վարձ, որի վճարումը հետաձգվել է COVID-19ի հանգամանքների պատճառով:

Վարձակալները, պահանջվում է, որ տասներկուամսյա մարման ժամկետի յուրաքանչյուր երեք (3) ամսվա վերջում մարեն վարձի առնվազն 25% -ը, եթե տանտերը եւ վարձակալը չեն համաձայնվում վարձի մարման այլ տարբեր պայմանների շուրջ: Եթե վարձակալը հեռանում է մարման ժամանակաշրջանում, ամբողջ վճարումը պետք է անմիջապես կատարի:

ՎԱՐՁԱԿԱԼԸ Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐԻ ՏԱՆՏԻՐՈՋԸ

Վարձակալից պահանջվում է տանտիրոջը տրամադրել հետեւյալը.

(1) «ծանուցում» տանտիրոջը, որտեղ նշված է, որ վարձակալը անկարող է վճարել վարձը՝ COVID-19-ի հետեւանքով եկամուտի կորստի պատճառով: Նման «ծանուցման» օրինակ է հետեւյալը՝

Իմ անունը [վարձակալողի անունը], եւ ես վարձակալ եմ ձեր հաստատությունում, որը գտնվում է Գլենդել քաղաքում, հետեւյալ հասցեում՝ [բնակարանի հասցեն], եւ [բնակարանի համարը]: Ես ժամանակավորապես ի վիճակի չեմ վճարել վարձը COVID-19ի՝ ֆինանսական իրավիճակիս վրա ունեցած ազդեցության պատճառով: Ես փնտրում եմ պաշտպանություն վարձը չվճարելու պատճառով վտարման դեմ՝ Գլենդելի վտարման հետաձգման հրամանի շրջանակներում: Կից՝ ներկայացված են փաստաթղթեր, որոնք աջակցում են իմ հայցադիմումին:

(2) Փաստաթղթեր, որոնք կարող են օժանդակել վարձակալի՝ վարձը վճարել չկարողանալու հայցադիմումին: Հաջորդ էջում ներկայացված փաստաթղթերը միայն օրինակներ են:

Հաջորդ էջում կարող եք գտնել Վտարման Հետաձգման հրամանում Պաշտպանության մասին Ծանուցման օրինակ

Քաղաքապետարանի Փաստաբանական Գրասենյակը չի կարող իրավաբանական խորհրդատվություն տրամադրել կամ դատարանում ներկայացնել մասնավոր կողմերի: Քաղաքապետարանի Փաստաբանը ներկայացնում է Գլենդելի

քաղաքապետարանը եւ Կալիֆորնիայի նահանգի ժողովրդին: Եթե ունեք հարցեր Ձեր իրավունքի, պաշտպանության միջոցների կամ պատասխանատվության վերաբերյալ, խնդրում ենք դիմել փաստաբանի:

Վտարման Հետաձգման Հրամանի ներքո Պաշտպանության Մասին Ծանուցում

Այս ծանուցումը տրվում է վարձակալից տանտիրոջը:

Վարձակալի մասին տեղեկություն

Անուն		Ազգանուն		
	Գլենդել	Կալիֆորնիա		
Փողոցի հասցե	Քաղաք	Նահանգ	Փոստային ինդեքս	Բնակարանի #

Ես ժամանակավորապես ի վիճակի չեմ վճարել վարձը COVID-19ի հետեւանքով առաջացած ֆինանսական խնդիրներիս պատճառով: Ես փնտրում եմ պաշտպանություն վարձը չվճարելու պատճառով վտարման դեմ՝ Գլենդելի քաղաքապետարանի Վտարման Հետաձգման Հրամանի շրջանակներում:

COVID-19 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ. COVID-19ը ազդել է իմ եկամուտի վրա հետեւյալի արդյունքում (ընտրեք մեկը).

- ☐ Աշխատանքի կորուստ
- ☐ Աշխատանքային ժամերի կրճատում
- ☐ Արտակարգ չնախատեսված ծախսեր, ինչպես օրինակ՝ բժշկական ծախսեր (ներառյալ բժշկի կամ հիվանդանոցային վճարները)
- ☐ Աշխատանքից բացակայություն՝ դպրոցի փակման պատճառով երեխային խնամելու համար
- ☐ Նահանգային կամ տեղական արտակարգ իրավիճակից բխող գործողություն, ինչը խոչընդոտել է իմ աշխատանքին
- ☐ Աշխատանքից բացակայություն COVID-19-ով հիվանդ լինելու, կամ COVID-19ով հիվանդ ընտանիքի անդամին խնամելու պատճառով
- ☐ Այլ _____

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ. Ես ներկայացնում եմ իմ եկամուտի կորստի մասին հետևյալ փաստաթղթերը (ընտրեք բոլորը, որոնք դիմում եք).

- ☐ Գործատուի նամակը, որը վկայակոչում է COVID-19ը՝ որպես աշխատանքային ժամերի կրճատման կամ աշխատանքի դադարեցման պատճառ:
- ☐ Աշխատավարձի վճարագրերը COVID-19- ի բռնկումից առաջ եւ հետո
- ☐ Բժշկական հաշիվները (կապված COVID-19- ի հետ)
- ☐ Երեխայի խնամքի ծախսեր
- ☐ Աշխատանքի դադարեցման մասին ծանուցումներ
- ☐ Բանկային տեղեկագրեր ֆինանսական իրավիճակի մասին՝ COVID-19ի բռնկումից առաջ եւ հետո
- ☐ COVID-19ի պատճառով եկամուտի կորուստի այլ ապացույց

Վերեւում ընտրվածների փաստաթղթերը կցվում են:

Վարձակալի ստորագրությունը_____ Ամսաթիվ._____